ՇԴ/0380/01/26

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ՊԱԼԱՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՎԱՐՈՒՅԹԻ ԸՆԴԴԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

21 հուլիսի 2026 թվական ք.Երևան

Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի քրեական պալատը,

նախագահությամբ՝ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Հ.ԳՐԻԳՈՐՅԱՆԻ
Ա.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ

ուսումնասիրելով թիվ ՇԴ/0380/01/26 քրեական վարույթի տարածքային ընդդատության հարցը լուծելու համար Վճռաբեկ դատարանի քրեական պալատ ուղարկելու մասին Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի՝ 2026 թվականի հուլիսի 14-ի որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Վարույթի դատավարական նախապատմությունը.

1. 2026 թվականի ապրիլի 9-ին Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան է ստացվել Միեր Դավիթի Խաչատրյանի վերաբերյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 490-րդ հոդվածի 2-րդ մասով թիվ 62234626 (ՇԴ/0380/01/26) քրեական վարույթը:

1.1. Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը (դատավոր Ա.Շտոյան) 2026 թվականի ապրիլի 13-ին որոշում է կայացրել թիվ ՇԴ/0380/01/26 քրեական վարույթն ստանձնելու և նախնական դատալսումներ նշանակելու մասին:

Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2026 թվականի հուլիսի 6-ին՝ նախնական դատալսումների ընթացքում, որոշում է կայացրել թիվ ՇԴ4/0380/01/26 քրեական վարույթն ըստ տարածքային ընդդատության Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան փոխանցելու մասին:

2. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը (դատավոր Հ.Ավագյան) 2026 թվականի հուլիսի 14-ին որոշում է կայացրել թիվ ՇԴ/0380/01/26 քրեական վարույթը Վճռաբեկ դատարանի քրեական պալատ ուղարկելու մասին՝ ընդդատության հարցը լուծելու համար:

3. Քրեական վարույթը Վճռաբեկ դատարանում ստացվել է 2026 թվականի հուլիսի 16-ին:

Ընդդատության հարցը լուծելու համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

4. Միեր Դավիթի Խաչատրյանի նկատմամբ, ՀՀ քրեական օրենսգրքի 490-րդ հոդվածի 2-րդ մասով, հանրային քրեական հետապնդում է հարուցվել հանրորեն վտանգավոր այն արարքի համար, որ *«(...) նա քննչական մարմնի ղեկավարի և քննիչների օրինական ծառայողական գործունեության կապակցությամբ հրապարակել է նրանց մասին արատավորող տեղեկություններ:*

Այսպես.

*Մեր Խաչատրյանը, տեղեկանալով, որ ՀՀ քննչական կոմիտեի պետության, սահմանադրական կարգի հիմունքների և հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների քննության գլխավոր վարչության երկրորդ վարչությունում իրականացվող թիվ ********, ինչպես նաև ՀՀ քննչական կոմիտեի հատկապես կարևոր գործերի քննության գլխավոր վարչության ընդհանուր բնույթի և ընտրական հանցագործությունների քննության վարչությունում իրականացված թիվ ******** քրեական վարույթներով իր համար ոչ ցանկալի դատավարական ընթացքի մասին, չհամակերպվելով տվյալ ընթացակարգի օրինականության փաստի հետ, «Facebook.com» սոցիալական կայքի «**» օգտահաշվի սոցիալական հարթակի այլ օգտատերերին հասանելի հրապարակային եղանակով 2026 թվականի փետրվարի 1-ին՝ ժամը 00:18-ին, ՀՀ քննչական կոմիտեի նախագահի և վերոհիշյալ քրեական վարույթներով նախաքննությունն իրականացրած քննիչների մասին՝ կապված նրանց օրինական ծառայողական գործունեության հետ, հրապարակել է արատավորող տեղեկություններ, այն է՝ իր անհատական հիշյալ օգտահաշվում գետեղել է «Այս անսկզբունք՝ ծաղրածուն դեռ 2025 թվականի հունիսի 30-ին հրապարակայնորեն ապացուցեց, որ ծառայում է ոչ թե օրենքին ու ժողովրդին, այլ մոլագար նեռի քմահաճույքներին: Նրա գլխավորած կառույցն այժմ գործի է անցել և ստացված հրահանգով, ամեն գնով փորձում է խոչընդոտել առաջիկա եպիսկոպոսաց ժողովը, մինչդեռ քննչականի փղերքը զբաղված են փուն պահելով ու խուսափում են լուրջ քայլերից, որպեսզի կարիերան վտանգի տակ չդնեն՝ առաջնորդվելով «մենք ո՞վ ենք, որ ինչ-որ բան փոխենք» մտածելակերպով: Կարևորը բարձր գոռացեք, որ պետություն ունենք» բովանդակությամբ հրապարակում: (…)»*[1]*:*

5. Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2026 թվականի հուլիսի 6-ի որոշման համաձայն՝ *«(…) Սույն դեպքում դատարանը փաստում է, որ Մ.Խաչատրյանին առաջադրված մեղադրանքի ուսումնասիրությունը*

[1] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 1, թերթեր 161-162:

հնարավորություն չի տալիս պարզել վերջինիս մեղսագրվող ենթադրյալ հանցավոր արարքի կատարման վայրը և գտնում է, որ դատարանը, նախնական դատաքննությունների փուլում կաշկանդված լինելով հանրային քրեական հետապնդում հարուցելու մասին որոշմամբ արտացոլված փաստական հանգամանքներով չի կարող հաստատված համարել այնպիսի փաստական հանգամանք (ենթադրյալ հանցավոր արարքի կատարման վայրը), որը հնարավոր է պարզել միայն հիմնական դատաքննությունների փուլում:

Արդյունքում դատարանը հանգում է հետևության, որ սույն վարույթի շրջանակներում՝ նախնական դատաքննությունների փուլում Մ.Խաչատրյանին մեղսագրվող ենթադրյալ հանցավոր արարքի կատարման վայրը պարզելու անհնարինության պայմաններում, կիրառելի է մեղադրանքի քննությունը՝ մինչդատական վարույթն իրականացրած նախաքննության մարմնի նստավայրի գտնվելու վայրի դատարանի կողմից իրականացնելու չափանիշը:

Նշված փաստական հանգամանքները գնահատելով վերոնշյալ իրավադրույթների լույսի ներքո՝ դատարանը փաստում է, որ Մ.Խաչատրյանին առաջադրված մեղադրանքի բովանդակությունից պարզ չէ ենթադրյալ հանցանքի կատարման վայրը: Նման պայմաններում դատարանը գտնում է, որ վարույթի տարածքային ընդդատությունը որոշելիս, պետք է հիմք ընդունել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 3-րդ մասի կարգավորումը, համաձայն որի՝ մեղադրանքը պետք է քննի այն դատարանը, որի դատական տարածքում գտնվում է մինչդատական վարույթն իրականացրած նախաքննության մարմնի նստավայրը: Սույն վարույթով մինչդատական վարույթն իրականացվել է ՀՀ հակակառուպցիոն կոմիտեի հանրային ծառայության շահերի դեմ ուղղված կոռուպցիոն բնույթի հանցագործությունների քննության վարչությունում, որի նստավայրը գտնվում է Երևան քաղաքում:

Ամփոփելով դատարանն արձանագրում է, որ թիվ ՇԴ/0380/01/26 քրեական գործն ընդդատյա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանին և սույն քրեական վարույթը պետք է փոխանցել Երևան

քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանին: (…)»[2]*:*

6. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը 2026 թվականի հուլիսի 14-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. *«(…) Վերոգրյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո դիտարկելով քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու մասին որոշման հիմքում դրված հանգամանքները՝ հարկ է ընդգծել, որ Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, թիվ ՇԴ/0380/01/26 քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու մասին որոշում կայացնելիս չի պահպանել օրենքի պահանջները:*

Մասնավորապես, դատարանն իր նախաձեռնությամբ քննարկել է վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու հարցը՝ արձանագրելով, որ Մ.Խաչատրյանին առաջադրված մեղադրանքի ուսումնասիրությունը հնարավորություն չի տալիս պարզել վերջինիս մեղսագրվող ենթադրյալ հանցավոր արարքի կատարման վայրը, հետևաբար՝ կիրառելի է մեղադրանքի քննությունը՝ մինչդատական վարույթն իրականացրած նախաքննության մարմնի աստիճանի գտնվելու վայրի դատարանի կողմից իրականացնելու չափանիշը:

Մինչդեռ, քրեական վարույթի նյութերի ուսումնասիրությունից ակնհայտ է, որ մինչդատական վարույթի ընթացքում հստակ պարզվել է Մ.Խաչատրյանին վերագրվող հանցանքի կատարման վայրը:

(…)

Մեղադրանքի փաստական կողմի վերլուծությունից բխում է նաև, որ նշված ենթադրյալ հանցանքը կատարվել է «Facebook.com» սոցիալական կայքի Մհեր Խաչատրյանի անհատական օգտահաշվի միջոցով սոցիալական հարթակի այլ օգտատերերին հասանելի հրապարակման եղանակով՝ 2026 թվականի փետրվարի 1-ին՝ ժամը 00:18-ին:

*Վարույթի նյութերից բխում է նաև, որ Մհեր Խաչատրյանը հաշվառված է և մշտապես բնակվում ու աշխատում է ****** *******: Ավելին, նախաքննության*

[2] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 2, թերթեր 60-64:

*ընթացքում Մեր Խաչատրյանը մի քանի անգամ հարցաքննվել է, փաստացի ընդունել է տվյալ հրապարակումը իր կողմից կատարված լինելու հանգամանքը, իսկ քննիչի այն հարցին, թե կարող է հստակ հիշել, թե հրապարակումը կատարելիս որտեղ է գտնվել, պատասխանել է, որ ուրույգ կարող է ասել, որ ******* քաղաքում է եղել՝ կա՛մ տանը, կա՛մ աշխատավայրում, կա՛մ երեկոյան զբոսանքի ժամանակ, քանի որ միայն այդ երեք դեպքում է առանձնանում և կենտրոնանում մամուլն ուսումնասիրելու վրա (…):*

Վերոգրյալի հաշվառմամբ Դատարանը գտնում է, որ տարածքային ընդդատությունը փոխելու վերը նշված նախապայմանների վերաբերյալ Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի հետևությունները իրական չեն, որպիսի պայմաններում նման որոշման կայացումը չի կարող դիտվել իրավաչափ՝ հաշվի առնելով, որ սույն քրեական վարույթով բացակայում է գործի տարածքային ընդդատությունը փոխելու հիմքը:

(…)

Այսպիսով՝ Դատարանը համաձայն չէ թիվ ՇԴ/0380/01/26 քրեական գործով վարույթի տարածքային ընդդատությանը, հետևաբար գտնում է, որ սույն վարույթը պետք է ուղարկել ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատ՝ վարույթի տարածքային ընդդատության հարցը լուծելու համար: (…)»[3]:

<u>Վճռաբեկ դատարանի քրեական պալատի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

7. Սույն վարույթով բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավո՞ր է արդյոք Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ՇԴ/0380/01/26 քրեական վարույթն ընդդատյա է Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:

[3] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 3, թերթեր 16-21:

8. ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «*Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք*»:

9. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք, (...) նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք*»:

9.1. Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, *«օրենքի հիման վրա ստեղծված դատարան»* հասկացությունը մեկնաբանելիս նշել է. *«Այն երկրներում, որտեղ օրենքը կոդիֆիկացված է, դատական համակարգի կազմակերպումը չի կարող թողնվել դատական մարմինների հայեցողությանը, սակայն դա չի նշանակում, որ դատարաններն օժտված չեն համապատասխան ազգային օրենսդրությունը մեկնաբանելու որոշակի ազատությամբ»*[4]:

Միևնույն ժամանակ, դատական մատչելիության իրավունքի համատեքստում, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է. *«Ներպետական դատական ատյանները դատավարական կանոնները կիրառելիս պետք է ձեռնպահ մնան դրանց չափազանցված ձևականացումից, որն իր ազդեցությունը կունենա դատավարության արդարացիության վրա»*[5]:

10. Վճռաբեկ դատարանն անձի՝ օրենքի հիման վրա ստեղծված դատարանի կողմից իր գործի քննության իրավունքի հիմնարար նշանակության վերաբերյալ իրավական դիրքորոշում է ձևավորել *Գևորգ Հարությունյանի* որոշմամբ[6]:

11. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի համաձայն՝ «*1. Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին ընդդատյա են այն վարույթները, որոնք վերաբերում են այդ դատարանի դատական տարածքում*

---

[4] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Gorgiladze v. Georgia* գործով 2009 թվականի հոկտեմբերի 20-ի վճիռը, գանգատ թիվ 4313/03, 69-րդ կետ:

[5] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Walchli v. France* գործով 2007 թվականի հուլիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 35787/03, 29-րդ կետ:

[6] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Գևորգ Հարությունյանի* գործով 2011 թվականի հուլիսի 13-ի թիվ ԵԿԴ/0211/01/10 որոշումը, կետեր 15-16:

ենթադրաբար կատարված հանցանքներին՝ անկախ քննչական ենթակայության կանոններից:

(…)

3. Եթե մինչդատական վարույթի ընթացքում հնարավոր չի եղել պարզել սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով նախատեսված՝ ենթադրյալ հանցանքների կատարման վայրը, ապա մեղադրանքը քննում է այն դատարանը, որի դատական տարածքում է գտնվում մինչդատական վարույթն իրականացրած նախաքննության մարմնի նստավայրը: (…)»:

Նույն օրենսգրքի 263-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Նախնական դատաքննության ընթացքում պարզելով, որ տվյալ վարույթն ընդդատյա չէ իրեն, դատարանն այդ որոշմամբ անհապաղ փոխանցում է ըստ ընդդատության:*

(…)

4. Վարույթն ըստ տարածքային ընդդատության սույն հոդվածի 3-րդ մասի առաջին պարբերության ընդհանուր իրավասության դատարանը մինչև նախնական դատաքննություն նշանակելը կամ նախնական դատաքննության ժամկետում որոշում է կայացնում վարույթը Վճռաբեկ դատարանի քրեական պալատ ուղարկելու մասին, եթե համաձայն չէ վարույթի տարածքային ընդդատությանը:

(…)

7. Սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքում Վճռաբեկ դատարանի քրեական պալատը վարույթը Վճռաբեկ դատարանում պահելու կամ հնգօրյա ժամկետում վերջնականապես լուծում է վարույթի տարածքային ընդդատության հարցը: (…)»:

12. Սույն վարույթի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- Մեր Խաչատրյանին մեղադրանք է ներկայացվել հանրորեն վտանգավոր այն ենթադրյալ արարքի համար, որ նա «Facebook.com» սոցիալական կայքի՝ իր օգտահաշվի սոցիալական հարթակի այլ օգտատերերին հասանելի եղանակով հրապարակել է ՀՀ քննչական կոմիտեի նախագահի և քրեական վարույթներով

նախաքննությունն իրականացրած քննիչների մասին արատավորող տեղեկություններ[7]:

- Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, փաստելով, որ Մ.Խաչատրյանին առաջադրված մեղադրանքի ուսումնասիրությունը հնարավորություն չի տալիս պարզել վերջինիս մեղսագրվող ենթադրյալ հանցավոր արարքի կատարման վայրը, գտել է, որ սույն դեպքում կիրառելի է մեղադրանքի քննությունը՝ մինչդատական վարույթն իրականացրած նախաքննության մարմնի նստավայրի գտնվելու վայրի դատարանի կողմից իրականացնելու չափանիշը, հետևաբար սույն վարույթն ընդդատյա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանին[8]:

- Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը փաստելով, որ մինչդատական վարույթի ընթացքում հստակ պարզվել է Մ.Խաչատրյանին վերագրվող հանցանքի կատարման վայրը, գտել է, որ սույն քրեական վարույթով բացակայում է գործի տարածքային ընդդատությունը փոխելու հիմքը[9]:

13. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշմամբ վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը նախևառաջ արձանագրում է, որ սույն դեպքում Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը ոչ թե փոխել է վարույթի տարածքային ընդդատությունը, ինչպես արձանագրել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը, այլ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 1-ին մասի հիման վարույթն ըստ տարածքային ընդդատության փոխանցել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան:

13.1. Վճռաբեկ դատարանի քրեական պալատը փաստում է, որ այն դեպքերում, երբ ենթադրյալ հանցանքը կատարվում է տեղեկատվական կամ հաղորդակցական

---

[7] Տե՛ս սույն որոշման 4-րդ կետը:
[8] Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:
[9] Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

տեխնոլոգիաների օգտագործմամբ՝ համացանցային տիրույթում, և կատարված հրապարակումները հասանելի են անձանց լայն շրջանակի, հանրորեն վտանգավոր արարքի կատարման վայրը, որպես կանոն, հանդիսանում է թվային միջավայրը, որն իր բնույթով պայմանավորված չունի տարածքային հստակ տեղորոշում: Հետևաբար, նման դեպքերում վարույթի տարածքային ընդդատությունը որոշելիս պետք է հիմք ընդունել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 3-րդ մասի կարգավորումը, համաձայն որի՝ մեղադրանքը պետք է քննի այն դատարանը, որի դատական տարածքում է գտնվում մինչդատական վարույթն իրականացրած նախաքննության մարմնի նստավայրը:

Սույն վարույթով նախաքննությունն իրականացվել է ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի հանրային ծառայության շահերի դեմ ուղղված կոռուպցիոն բնույթի հանցագործությունների քննության վարչությունում, որի նստավայրը գտնվում է Երևան քաղաքում:

Բացի այդ, Վճռաբեկ դատարանի քրեական պալատն արձանագրում է, որ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի վկայակոչած՝ նախաքննության փուլում մեղադրյալ Մ.Խաչատրյանի հայտնած տվյալները նախնական դատալսումների փուլում վարույթի տարածքային ընդդատությունը որոշելու հիմք հանդիսանալ չեն կարող:

14. Վերոշարադրյալի հիման վրա՝ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը գտնում է, որ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ՇԴ/0380/01/26 քրեական վարույթն ընդդատյա է Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին, հիմնավոր չէ:

15. Ամփոփելով՝ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը գտնում է, որ թիվ ՇԴ/0380/01/26 վարույթն ընդդատյա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանին:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 7-րդ մասով՝ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը

Ո Ր Ո Շ Ե Ց

Մեր Դավիթի Խաչատրյանի վերաբերյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 490-րդ հոդվածի 2-րդ մասով թիվ ՇԴ/0380/01/26 քրեական վարույթն ընդդատյա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանին:

Նախագահող՝ _____ Հ.ԱՍԱՏՐՅԱՆ

Դատավորներ՝ _____ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆ

_____ Հ.ԳՐԻԳՈՐՅԱՆ

_____ Ա.ԴԱՆԻԵԼՅԱՆ

_____ Ա.ՊՈՂՈՍՅԱՆ